

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	համար
սարեկակ 12 ֆր.	
վեցամսայ 7 "	
Արտասահմանի համար	սարեկակ 15 "
վեցամսայ 8 "	
Աւերիկայի համար	սարեկակ 3 ֆր.
վեցամսայ 4.50 "	

Մանուգլահ տղր ա-
տասին երեսին համար
40 սակիսի իսկ վերջին
երեսին համար 20 սակ-
իսի է. երեսին աւերի-
կայի համար
20 0/0 գիշը կրլայ:

Վառնայի համար մին
ի 10 սակի է

ՇԱԽԻԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔՈՂՈՒՄԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ԵՐԵՎԱՆ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Redaction du journal
"Charjoum"
Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար
մեկին 15 ՍԱԼԻԻՍ
Արտասահմանի համար
մեկին 20 ՍԱԼԻԻՍ

Գրութիւնք էս չեն
ուր

ՇԱԽԻԹԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆՈՐԴ ԳԵՏԻ ԵՒ ԿԱՆԻՍԻ ՎՃԱՐԷ

ՊՈՍՏԱԿԱՆ ԵՆՄՏՈՒԹԻՒՆ

Ե

ԹՈՒՎԱԶՆՈՒԹԻՒՆ

—)0(—

Անցեալ օրը մեր ընթերցող-
ները կարգացին Զմիւռնիոյ մէջ
անդի ունեցած հայ յեղափոխա-
կան դաւադրութեան բացման և
և մեծաքանակ ձերբակալութիւն.
ների մասին. Մի ահագին յե-
ղափոխական գործ, պատրաստ-
ված ահագին զոհողութիւններով
չէր և գնում մի պատահական քի,
որը տեղի է ունենում մի գործի-
չի անմտութեան, թեթեւաբ-
ուութեան և թուլահոգութեան
պատճառով:

Գործիչի ձեռքը վերաբերում
է ու նա փոխանակ տանից
գուրս չը գալու, ինչպէս 96ին
արեւ չը աչքը իր ոտքը պատահ-
մամբ վերաբերվելու միջոցին ու
տան մէջ փակվեց, իր ձեռքը
անշուշտ փութաթած առնում գը-
նում է ինչ որ մի դեպքան.
այնտեղ դեղ գնելու և անմիջա-
պէս կասկած հրաւիրում իր
վրա...

Այդ բաւական չէ, գործիչը
գիտնալով որ իր տան մէջ ամեն
ինչ գոյութիւն ունի յեղափոխա-
կան դաւադրութիւնը մանրամաս
նօրէն բանալու համար, առանց
այլեւայլութեան, անշուշտ ու է
ձեռքան բռնաբարումի ազգեցու-
թեան տակ, թուլահոգութիւնն է
ուսննում իր տան հասցէն յանձ-
նել կառավարութեան և իր խոս-
տովանութիւնը աւելցնել գտնը-
վածների պարզաբանութեան հա-
մար:

Ինչպէս 96ին Գնունի և Ար-
տաշէս նախապէս գիտակցութիւ-
նը ունենալով որ մարդը թոյլ
արարած է և կարող է ֆիզիքա-
կան տանջանքների չը գիմանալ,
թոյնով բռնաւորված են սկսում
Սամաթիոյ հրաշալի կռիւր և
կռիւց յետոյ ինքզինքնին թու-
նաւորում թշնամու ձեռքը շնկ-
նելու անպատուութիւնից ազատ-
վելու և թէ միանգամ ընդմիջտ
զաղտնիքները իրենց հետ գե-
րեզման տանելու համար:

Նոյն 96 թուականի սկիզբնե-
րում կարծեմ, մի գաշնակցական
գործիչ իր զէնքը մաքրած մի-
ջոցին յանկարծ սպանվում է. ու
նրա պարզ արհեստաւոր, նոյն
իսկ պաշտօնագէտ գաշնակցու-
թեան հետ չը կապված եղբայրը
կազմակերպութիւնը վտանգից
փրկելու, կառավարութեան խու-
զարկութիւնների առջեւ առնե-
լու համար ճարպիկ հնարամտու-
թիւնն է ունենում անմիջապէս
մի տոմսակ գրել որ ինքն է եղ-
բորը սպանել, այդ տոմսակը
թողնում է եղբոր դիակի մօտ և
ինքը փախչում:

Խուզարկողները դիակը և
տոմսակը գտնելով, գործը վերա-
ծում են մասնաւոր ոճրագործու-
թեան և միայն ոճրագործին ո-
րոնում:

Սովորական ոճրագործները, ո-
րոնք ու է ոճիր կատարած մի-
ջոցին կասկածելի վէրք են սա-
նում, հասկացողութիւնը ունեն
զգուշ լինել, իրենց տներում
թաղվել որ իրենց կասկածելի
վէրքը կասկածոտ ու չաղորդի-
նից զերծ մնայ, Բայց Զմիւռնի-
ոյ գործիչը, այս օրինակ բերած
զգուշութիւնները անելու ոչ
պարզ հնարամտութիւնն է ունե-
ցել և ոչ Արտաշէսների, Գնունի-
ների գորաւոր կամքը իր անձը
զոհել, իր ձեռքը իր տան մէջ
գանգրէնայի վերածել, մեռնել
ոչնչանալ միմիայն գործը և
զաղտնիքները փրկելու համար:
Պատահական գործիչներին, յե-
ղափոխական գործի մէջ պատա-
հաբար մտնողներին և այդ գոր-
ծի ամբողջ գեւարութիւնները
չը մբռնողներին միշտ պատահում
են այդ պիտի պատահաներ, ո-
րոնց շնորհիւ թէ իրենք են ոչն-
չանում, թէ գործը և թէ գոր-
ծին ծառայողները:

Զմիւռնիոյ գեպքը մեր յեղա-
փոխական պատմութեան մէջ պի-
տի ներկայանայ անմտութեան,
կամքի թուլութեան, անտակ-
տութեան մի գրեթէ բացառիկ
օրինակ...

ՎԱՐԴՈ

ԵՐԿՈՒ ՈՒՔԱԶԷՐ

Ուրբաթ, Օգոստոս 18 ի հեռագրի-
ները. Ս Բեթերսպուրկէն հաղորդե-
ցին հետեւեալ լուրը. — ՎՕգոստոս 14
թուակիր կայսերական ու թագով մը
բոլոր կալուածներն ու զբաղով մը
ներք, որ կը պատկանէին հայկական
եկեղեցիներուն, վանքերուն, զբա-
ղոցներուն և այլ կրօնական հիմնա-
կութեանց, վերստին Հայ Եկեղեցոյ
հովանաւորութեան ներքեւ գրուած
են...

Վերջապէս, Մեծափառ Յափշտա-
կիչը, որ յունիս 12 ի կայսերական
ու թագով ուսումնաբարութեան տաս
նաբանայ պատուիրանքներուն էն
զլուարը — ԿՈՂՈՒՄՈՒՐ — արարեա-
նաճար էր արձակել, այսօր ալ միևնոյն
կերպով արարեաճար է վերադար-
ձընել զանոնք...

Հայ եկեղեցապատկան կալուած-
ներ... ինչք՛ր չըրինք, ինչք՛ր չը
գրեցինք, ինչք՛ր չը զոհեցինք ատոր
համար...

Այդ պահուն էր, որ Վասպուրա-
կանի Արծիւը, իր վաստակաւոր
կեանքին վերջին հանգրուանէն դուրս
ցատկելով, անգամ մ'ալ ցցոյցեալ
սպառնական իր հակառակորդ ար-
ծուին դէմը և մնաց անյազթ ու ան-
զառնալի, Այդ պահուն էր, որ մեր
ուստահայ եղբայրները, որոնք մին-
չեւ այն օր կարմիր տեսած էին լոկ
զուսուտը թո զթերու վրայ, զգա-
ցին նաև իրենց ոտքերուն ներքեւ,
իրենց անդամներուն վրայ եւ փոխան
«բանով քրիչով» Հայաստանի փրկու-
թեան վազելու երազներու, սովրի-
ցան ինքզինքնին պայտպանելու կեր-
պը, գիտցան բռնապետին մագիլնե-
րուն սրտի ինչ, և վերջապէս,
սովրեցան խօսելէ աւելի՛ կոտորել...

Եթէ հաստատ է այս մեր յոռաջ
բերած հեռագրին բովանդակութիւնը
այն ժամանակ Ռուս բռնապետու-
թիւնը շատ ու զգացած ըլլալու է
արարքին անմտութիւնը, ճնորհիւ
ատոր, միապետութիւնը ստեղծեց
կամ աւելի, փութացուց ստեղծումը,
զիմադրական ոյժի մը կովկասահա-
յութեան մէջ, որ, քիչ մը խոհեմու-
թիւնով դեռ երկար ատեն կարող էր
խափանուած պահել:

Այժմ ամբողջ կովկասահայութիւնը
ճանչցած է յանձին յիպոպետութեան
անհաշտ թշնամի մը խարդախ, ոճրա-
գործ խաբերայ, մարդասպան, որ,
մէկ երեսէն շոյիլով միւս կողմէն
մոլեռանդ ու տխմար միւսիւրմաննե-
քէն ս բատա չի ն եր կը բանակէ

հայկական կոտորածներ սարքելու
համար:

Ո՛չ եկեղեցապատկան կալուածնե-
րու վերադարձը և ո՛չ ալ ուրիշ նո-
րակերտ թմբուցիչներ կրնան պա-
ղծել անոնց մէջ վատուող արիւնին
վրէժը:

Փանձակ, երեւան թիֆլիս, Ալեք-
սանդրապոլ և այլ անկիւններ թափ-
ուող արիւններուն բողբոլի ձայները
մարած չեն, և նոյն իսկ սատակա-
հար Բլէվէի ոսկորներուն մնացորդ-
ները հանգարա չը պիտի թողուն
հանգիլ...

Երկրորդ հեռագիր մը կը հաղորդէ
ուրիշ կայսերական արարեաճար ու-
թագի մը արձակումը, ստորագրուած
Բեթերսպուրկէն, Օգոստոս 19 թուակիր...
Նիքոլա Բ. ի սոյն մանիֆէստը կը
յայտարարէ շնորհուած 40 օսու-
տարս զվէ նն ա ի ա Տ ու լ մ ա ն ն,
այսինքն, — ո՛վ ծաղրանք և ո՛վ հրէ-
շային հէգնանք — ուսական բարլա-
մէնդի մը կայացումը... կամ, եթէ
կուզէք, Պոլիկիւնեան մեծահաշակ
Սամանադրական օրինաց հաստա-
տումը...

Որովհետեւ Ռուսաստանի ոյժն ու
էութիւնը կազմուած է եղբր միշտ
ցարին և ժողովրդին սիջե եղած հա-
մերայնութեան մէջ, որովհետեւ
կայսերական նախապայպերուն ամե-
նամեծ հոգեբէն մէկը եղած է միշտ
սիրով մնալ իրենց հպատակներուն
հետ ուստի և, անոնց արժաւոր
որդին ալ Նիքոլա՛ այդ առաքինի
գործը յոռաջ մղելու ժամանակը հա-
սած համարելով՝ մէջտեղ դնել կու-
տայ յիշեալ սահմանադրական օրէնք-
ները... որոնք, աւելցնենք մեր կող-
մէն անզլիացոյ խօսքին նման, բեռ-
նակիր ձիւն մը՝ իսկ քմծիծաղը կը
չարժեն իրենց այլանդակութիւնով...

Մանիֆէստին ընկերակցած է սահ-
մանադրական օրէնքները, որ մօտա-
ւորապէս 70 յողուածներէ կը բաղ-
կանայ:

Կը խոստանանք մանրամասնօրէն
վերադառնալ այս կէտին:

Մ. ՏՈՒՍԻ

ԽՂՂԱՂՈՒԹԵԱՆ
ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

Ան, Օգոստոս 9-ին ի վեր, կը շարունակուի երկու պատերազմիկ տէրութիւններու լիազօրներուն խաղաղութեան բանակցութիւնները: Զփազանց թերահաւատ ասոր մէկ բաղձալի վերջաւորութեան, ու այդ թերահաւատութիւնը հիմնուած անգլիական եւ ֆրանսական առաջնակարգ օրաթերթերուն օրէ օր բեթերապուրկէն եւ թօքթօքն հասնող տեղեկութիւններու վրայ, — Իրաժարեցանք ո եւ է լուր հաղորդելէ այդ առթիւ, քանի որ, խոստովանինք, յոյս ալ չունէինք թէ իրապէս պիտի շարունակուէր երկու թշնամիներու այս քաղաքագիտական ցաշտին վրայ ճակատումը... Բարեբաղդաբար, թէ դժբախտաբար, մինչեւ օրս կը շարունակուի այդ եւ մեզ կը մնայ տեսնել թէ ինչ արդիւնք ունեցաւ սոյն խորհրդածողութիւնը եւ ինչ վարձան պիտի ունենայ:

Առաջին նիստը բացուեցաւ օգոստոս 9-ին առաւօտեան, որու միջոցին ըննուեցան միմեանց վկայագիրները ու այլ նախնական խնդիրները: Խորհրդածողութիւն ներկայ են մի միայն պ. պ. Վիթթէ եւ Ռոզէն, ու քարտուղար մը՝ Ռուսաստանի կողմէ, պ. պ. Գոմուրա եւ Թաքսիբա ու քարտուղար մը՝ Ժաբոնի կողմէ: Եւ ոչ մէկ օտարականի արտօնուած կը մասնակցի, հոգ չէ թէ Բորգոմուրը, ուր ժողովը տեղի կուենայ, այս րոպէիս թղթակիցներու եւ ժուռնալիստներու բանակ մը կը կազմէ:

Նախնական այդ նիստերուն մէջ որոշուած են նաեւ ժողովի ժամերը, գործածուելիք լեզուները արձանագրութեան եւ այլ պաշտօնական տօքսիմաններու լեզուն, արձանագրութիւններն ու բանակութիւնները հրապարակելու կամ չը հրապարակելու խնդիրները. եւն եւն:

Լեզուն, խօսակցութեան համար,

ՍԷՍԻԼԻԱ Մ. ՊԼԷՅՔ

Դ Է Փ Ի

Հայկական Ռոման մը
(Թարգմանութիւն Անգլիերէնէ)

Փ. Ա.

ԵՐ ԵՍ ԵՐԵՍՍ ՄԵՆ ԷՐ

Միքէլի ձեռքում այդ գիրքը իմ դաստիարակութեանս Ալֆան եւ Օմեղան դարձաւ: Էն թերեւս ա. ելի գէշն ալ ընէր, այլ լաւագոյնը ընել՝ բողոքովին անկարող էր: Գրիգոր Լուսաւորիչ Աստուածաշունչի թարգմանութիւնը հայութեան տալէն ի վեր՝ ատիկա ժողովրդին մատենար դարձաւ: Ընչդէ, որ միջնադարեան տգիտութեան եւ երկար դարերու բռնապետական ճնշումներու միջոցին իր Աստուածային հրաշայիթները ժողովրդին համար աւանդութեանց փոխուեցան եւ իր գերմարդկային յատկութիւնները անհետեւ նախապաշարման, սակայն եւ Աստուածաշունչը իրենց ընդգրկած դաւանանքը միաց:

Բայց Միքէլի դառնութեամբ կզգար

էն դժուարին հարցը, քանի որ ուսանք, ինչպէս Վիթթէ, կը հասկընայ միայն իր լեզուն եւ ֆրանսերէն, իսկ Գոմուրա միայն ճարտարէն ու Թաքսիբա՝ անգլիերէն, կորուշուի գործածել որն որ յարմար դատուի խոսողին եւ այսպէս, այժմ ժողովին մէջ կը խօսուի առ նուազն 4 լեզու: պ. Վիթթէ կը խօսի բոսնիերէն կամ ֆրանսերէն, որ իր թարգմանին միջոցով կը փոխադրուի անգլիերէնի եւ պ. Գոմուրայի թարգմանին կողմէ եւ՝ ճարտարէնի: Պաշտօնական արձանագրութիւններն, երկուստեք համաձայնութեամբ, կորուշուին ըլլալ թէ ֆրանսերէն եւ թէ անգլիերէն: Գրչ մը ընդգրկմաստուիւն տեղի կուենայ բանակութեան բացարձակապէս հրապարակման խնդրին առթիւ: Պ. Վիթթէ փափաք կը յայտնէ որ ամեն ինչ հրապարակուի օրէ օր, որպէսզի բովանդակ աշխարհն ալ մասնակցեցուցուի ըլլալ այս մեծ հարցին, սոր միայն Ռուսաստանի եւ Ժաբոնի խաղաղութեան համար չէ, այլ ամբողջ աշխարհին՝ Սակայն ճարտարական լրագր պ. Գոմուրա, միստիքի եւ խոհեմութեան ժողովրդին արժանաւոր ներկայացուցիչը, կառավարիչ բացարձակ գաղտնապահութիւն ժողովին մէջ անգի ունենալիք բանակութեան եւ այլ խնդիրներու առթիւ, մինչեւ որ ատուք հիմնապէս չորոշուին: Պ. Վիթթէ տեղի կուտայ եւ հաճաքման երորդ օրը, պ. Գոմուրա կը ներկայացնէ պայմանները, որոնք պ. Վիթթէի կողմէ քննութեան մը վերջ՝ կը փոխադրուին Բեթերապուրկ...
Այդ պահուն յայնի շէր թէ ի՞նչ կը պարունակէին սոյն պայմանները եւ քանի յօդուածներ. այսօր ամէն ինչ պարզ է եւ կուզեմ համառօտակի հետեւիլ կատարուած գէպքերուն:

Պայմանները որ կը բաղկանային 12 յօդուածներէ եւ որոնց սկզբունքով ընդունելէն կախուած էր ուղղակի բանակութեան բացումը, փոխա-

իր տգիտութիւնը, Ա՛հ երանի՛ թէ Ինֆիւս ալ կարողանար Ամերիկացի միսիսթարներու դպրոցը երթալ եւ սովորիլ այն պզտիկ աղջիկներուն նըման, որոնք իրեն պէս իշխանուհի չեն: Այս էր իր մշտական ու անփոփոխ յանկրօքը իւրաքանչիւր դասաւարտուէն յետոյ կար ուրիշ մ'ալ, բայց ոչ իմ լսողութեան համար, քանի որ այդ միջոց կարտասուէր (սօղոգովօք).— Այո, Արամաբան իշխանը իմաստուն է, Երեւան պէտք չէ գիտնայ—երբէ՛ք Ո՛հ, աղան իսկացի է: Ափսոս փոքրիկ Ինֆիւսին, Տգէտ ու անուս պիտի մեծնայ էն—ինչպէս Աղորիքի կիները, ինչպէս Քիւրտիտանի կապերտ հիւսողները, ինչպէս ջրկիրները, Աւա՛ղ, հզօրները ինչպէս ինկան. ազնիւ ոսկին ինչպէս նսեմացաւ:»

Մինչդեռ հաւատարիմ Միքէլս Աստուածաշունչական բանաստեղծութեամբ մը իր իշխանուհիին անկուճկ կողքար, ուսման սէրը իմ մէջս այն աստիճան կը բորբոքէր, որ կը փոտաբանէի ու կը գեղակերտէի իր նոր պաշտօնին անարուեստ ջանքերը Յաճախ, երբ իր քառակուսի թուի մատները հանդս բորբոքէր գրերուն վրայէն կանցնէին, յանկարծ կը բռնէի ու կը համբուրէի՝ զանոնք Շուտով կրցայ հեզել եւ կարգալ յի սկզբանէ: Ա՛յ

նակ բարցարձակապէս մերժման հանդիպելու, ինչպէս կը յուսացուէր. Բեթերապուրկ ընդունած է ատոնցմէ ուժը միայն եւ 4ը մերժած իրբեւ անվիճելի:

Աւելի յառաջանալէ առաջ, թուեցք հոս այդ 12 կէտերը.

1. Ժաբոնի առաւելակշիռ ազդեցութիւնը Գորթայի վրայ եւ ներքունական պաշտպանութիւն քօթեական կայսրութեան վրայ;
2. Ռուսաստանն ու Ժաբոնը փոխադարձաբար եւ հասարակօրէն հեռանան Մանչուրիայէն;
3. Ռուսաստանն ու Ժաբոնը միաձայնութեամբ որոշեն թէ ինչ պայմաններով պիտի յանձնեն Մանչուրիական նահանգները Զինասանի:
4. Լիթուանիայի բրաշխաւորութիւնով Ժաբոնի թողուլ:
5. Թողուլ Սախալին կղզին Ժաբոնի:
6. Երաշխաւորութիւնով թողուլ Ժաբոնի Բորթ-Արթուր, Տալնի եւ Կլիօզ կղզիները:
7. եւ 8. Արեւելեան Զինասանի եւ մանչուրիական երկաթուղիներու հաւասար իրաւունք:
9. Հատուցում պատերազմական ծախսերու:
10. Յանձնում Ժաբոնի բուսական այն զրահակիրներուն որոնք չեզոք շաւահանգիստներու մէջ փակուած են Ժաբոնի կողմէ:
11. Զափաւորում բուսական նաւային ուժերու հեռաւոր արեւելքում:
12. Զկնորութեան իրաւունք Ժաբոնին Վլախիլոստօքի շուրերուն մէջ, մինչեւ Պարիսիկ ծովը:

Բեթերապուրկի շար մերժածներն էին, իրրեւ անհնարին կէտեր. — 5, 9, 10 եւ 11, որոնք էս գլխաւորները կը կազմեն ճարտարական պահանջներուն:

Լուս կարգին, այս բոլորը դարձան վիճարանութեան նիւթ: Համա հաւասարօրէն համաձայնութեան եկան առաջին շորսին: Հինգերորդը անլուծելի էր. թողուեցաւ այդ եւ անցան յաղորդներուն, որոնք նոյն Միքէլի իմաստութիւնը, իմ ճանահատուածս, Սողոմոնն ալ գերազանցած էր, ու մահկանացուէ մը աւելի կը պաշտուէր իր Ինֆիւս... Այսպիսի սկզբնաւորութիւն մը ընելէ վերջ՝ աւելորդ է ըսել որ յառաջագիժութիւնս շուտափոյթ եկաւ: Որպէս թէ հրաշքով մը՝ կարողաւ սովորեցայ Հասնելով այս աստիճանին՝ գիտութեան զոնները բացուեցան առջիս: Իմա «պնտուսներ» ու պատրանքներ» չկար: Միքէլս այլեւս իր երեսխան զօրացնելու եւ զուարճացնելու համար նեղուեցաւ պէտք չունէր: Նոյն իսկ ձմեռուան երկար գիշերներն ալ, ինչպէս եւ ամառնային պայծառ կարճատեւ ժամերը անբաւական էին իմ բոժանսի, պատմութեան եւ բանաստեղծական աշխարհներուն մէջ թափառումներուս համար: Ինչ գիրք որ կարդայի կիւրացնէի զայն: Գրքերս լաւ եւ խնամքով ընտրուած էին: Որո՛ւ կողմէ: Հիմն գիտեմ Այն ատեն անյագօրէն կը կարդայի առանց հարցեր ուղղելու:

Բայց եւ այնպէս, Միքէլս գիրքը— իմ այբենարանս, իր վառվառն պատկերներով, իր յուզիչ բանաստեղծութեամբ, իր վեհ գերընտիր սաղոսոսներով, տակաւին հոգեոյս առաջնակարգ տեղը գրաւած էին: Հիմա, շատ անգամ կանդրադառնամ այդ Միքէլէն

պէս համաձայնութեամբ ընդունուեցան մինչեւ յօդուած 9 եւ մնացորդները:

Ռուսաստան բացարձակապէս կը մերժէ յանձնել Սախալին կղզին, քանի որ, ըլլալով իրեն մերձաւոր հող մը, կրնայ ճարտար ժամանակի ընթացքին ամրացնել եւ սպանալիք մը ըլլալ իրեն: Սա պատճառաւորութեան կողմնակի է: Ո՞՞՞՞՞՞՞ կարծիք կուտան ճարտարները երաշխաւորական դրամով յանձնել զայն Ռուսաստանին, որով կերպով մըն ալ, այդ գուժարը մասամբ ծածկելով իր պատերազմական ծախսերը, այլեւս կը հրաժարի պատերազմական ծախսերուն հատուցում պահանջելէ եւ այս պէտքով երկու խրթին հարցերը կը լուծուին: Սա տակաւին անորոշ գերութեան մէջ է:

Ապա կը յաղորդէ հատուցումի խնդիրը, Պ. Վիթթէ հաստատապէս մերժած է այդ կէտը. «Ռուսաստանն եւ ոչ մէկ կողմէ կրնայ տալ, որովհետեւ այդպիսի բան մը տեղի ունեցած չէ նախապէս ուրիշ ունեւտեղութեան համաձայն պարագաներու տակ»: Ասոնք ըլլալ կը թուին Վիթթէի խօսքերը. «Ռուսաստանն յաղթուած է, բայց ընկճուած չէ», աւելցուցած է ռուս լրագրող, իսկ Գոմուրայի առաջնութեան էն կողովի հարցը կը կայանայ ասոր մէջ:

«Մենք միաստորութիւն (ինտէլիգենցի) չենք պահանջեր Ռուսաստանէն, որպէս զի կարծուի թէ զինքը պատժել կուզենք, պատասխանած է Գոմուրա, այլ մեր պահանջն է եղած ծախսերու վճարում մը, որ օրինակէ ամեն կերպով, քանի որ Ժաբոն 500 օրեր շարունակ վատնած է առաւել քան 10 միլիոն ֆրանք օրական, ի միջի այլոց եւ 100000 ռուս վիրաւորներու եւ բանտարկեալներու վրայ եւս...»

Թէ ինչ է քանակութիւնը սոյն ծախսի հատուցման, յայտնի չէ. նախ քան բանակցութեանց սկսումը, պահանջը կը հաւասարէր 5 միլիարտ ֆրանքի, որը վերջ ի վերջոյ, շատ սիրուած գրքին նկատմամբ ունեցած մտածումներուս վրայ, թէ այդ տրուած էր իրիւ եւ նմոյշ իւրաքանչիւր դարու գրողներուն, ինչպէս եւ մեր նոյն հաւակետին տապանն ալ իրր մօտ էլ բոլոր անոնց, որոնք ապագայ սերունդներուն համար ծովային լեզուներէն պիտի կտուցանէին:

Գիշեր մը Բեթելեհի մանկան պատմութիւնը կը կարդայի Միքէլի— շատ կը սիրէինք միասին կարդալ ու արտասուել այդ սիրուն, տխրալի պատմութեան վրայ—երբ զուրը բաղխուելով՝ Գրոգօն ներս մտաւ: Շատ մեծցած էր ան, ու հիմա երկայնահասակ հուժկու երիտասարդ մը դարձած. շատ քիչ անգամներ տեսած էի զինքը: Ինք դպրոց կերթար եւ որովհետեւ հայրս ալ անոր հետ տեսակցութիւնը արգիւտ էր, օւստի, բացի քանի մը դիպուածական առիթներէ, երբէ՛ք չէի հանդիպած իրեն: Այժմ կախարդուած սքանչացումով մը նայեցայ վրսն: Ինչպէս ըսի, երկայնահասակ, զօրաւոր, ջղուտ էր եւ իր տարիքին համեմատ լաւ կազմուած. մօտ տասնութ տարեկան էր: Բայց զէ՛՛՛՛՛՛՛ կը հայու զէ՛՛՛՛՛՛՛ չէր երբէք, ոչ թէ որովհետեւ ուրիշ մը տեսած էի, այլ ատոր տեսլականը կազմած էի, իմ եզրակա-

փառաման սիրոյն իջաւ 2—2 եւ կէսի, երեւան թերիով ժողովարարացէս 70 միլիոն ֆրանքի առօրեայ ծախք մը: Այս յօդուածը տակաւին վըճուուած չէ եւ վճուուելու ալ միտք չունի: Այսուհանդերձ մամուլի մեծամասնութիւնը այս հատուցումը բացի չափաւոր նկատելէ, կընդունի նաեւ իբրեւ շատ օրինաւոր եւ ձաքօնի արդար իրաւունքը:

Հաւասարապէս մերժումի ենթարկւած են նաեւ չեզոք նաւահանգիստները փակուած ուսուցողականները յանձնելու եւ հետաւոր արեւելքի մէջ ուսուցիչներու շաբաթը չափաւորելու կէտերը: Սակայն վերջնական չեն ասոնք: Կը յուսացուի թէ ձաքօն զինչնի վերջին երկուքը եւ առնել մասնաւոր հաստատութիւնով, ինչպէս նաեւ Ռուսաստան ալ իր կողմէն զինչոյ թիւն ընէ վարչականութեան կէտերը: Գործուած ինչ որ արդէն իրականացուած է, ասոր նշոյլն իսկ չը կայ: Եւ այժմէն, հակառակ տակաւին խզման նշան մը չըլլալուն, կրնանք վստահեցնել ընթերցողը, որ թերեւս մինչեւ սոյն գրութեան հրատարակումը արդէն տմէն ինչ վերջացած ըլլայ եւ վերջին ու իր հետեւորդները, ինչպէս եւ Գոմարու իրենները, հեղ մըն ալ գտնեն ինքզինքնին Օյսթրալիայ, հոնկէ ալ նաւուս քապիտէն մէջ ու առաւօտ մըն ալ, բանալով աչքերնին, հանդերձալ աշխարհը ճամբորդողին նըման զոչեն:—Եւ աչքերքնիս բացինք եւ տեսանք թէ երազ էլ...:

Երազ... այո, ու այդ երազի պիտի յարջորդէ իրականութիւն մը արարելնի եւ նախնիքի:

Ինչ անուս տալ այս ժողովին, կատակերգութիւն, ողբերգութիւն, զաւեշտ թէ խաղաղութիւն...

Յաջորդ շաբթուան գլ. կամ դշ. օրերը պիտի ըսեն այդ, երբ պիտի ստորագրուին թանակութիւններու բրտէ վեպալները, որ այս պահուս կը պատրաստուին երկու լրագորներու

քարտուղարներու կողմէ: «Ես իմ կրցածս չը խնայեցի, ըսած է վերջին. եթէ խաղաղութիւնը չը կայանայ յանցանքը ուրիշ տեղ պէտք է փնտռել»:

Փնտռեցէք եւ պիտի գտնէք, կըսէ վարդապետ մը:

Գործուցէք նաւաւորները զէպի Բլթերովի եւ Բեթերսպուրկի հոյակերտ պալատներուն խորը հոն կը գտնէք ամէն ինչ:

Մ. Տոլակ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՖԻԼԻՊԷԷՆ

—()—

Յիլիպէից մեզ տեղեկացնում են հետեւեալը.— «Վ. կոմիտէն որոշած ըլլալով անպատճառ «ՌԱԶՄԻԿ» անունով թերթ մը հանել, որուն գործադրին նպատակը պիտի ըլլայ ռազմել վարդօյի դէմ... Մեծ քանակութեամբ ընկալագրերը զրկած են իրենց շրջանի մարմիններուն և ընկերներուն որպէսզի աքսիոնեւրական հիման վրայ դրամ ժողովեն թերթին հրատարակութիւնը սկսելու համար: Այդ պատրակ մէ հասարակութեան աչքին թող փնջու համար: Թէ թերթը յիշատակութեան զբաւով չը պիտի հրատարակուի:

«Սակայն գծախտութիւնը անոր մէջ է որ հակառակ Վ. կոմիտէի վարդօյի դէմ ըրած բրտապահելի, ինչպէս Յիլիպէի մէջ, այնպէս և ուրիշ տեղեր հակառակ են այդ թերթին երեւան գալուստ: Չեզի գրուեցաւ արդէն Յիլիպէ տեղ մասին տեղի ունեցած ժողովի և այն կատարի բո-

նուհին», Գրոգօն զլիկոր հնազանդեցաւ: Մինչեւ իր ոտնաձայնին դադրուած պահել զինք, ապա Միքէն ոտքի ելաւ ու զին հօրս առաջնորդեց:

Ամբողջ մայմնով կը դուրսի բացի Գրոգօյի վախճա, այս հօրս ներկայանալու առաջարկը զարհուրեց զին: Առաւօտեան այցելութիւններս, թէպէտեւ այժմ երեսը չէր զարձներ ինձմէ եւ կամ չէր վաճառէր զին մուրհամար տակաւին չարչարանք մըն էին ինձ համար: Միքէ հասկցաւ ներքին յուզումս եւ, ձեռքս սեղմելով խրատուսիչ կերպով ըսաւ.— «Մի վախճար, զաւակս, մեր հայրերուն Աստուածը քեզի հետ է»:

Հօրս նստած մեծ սրահը մտայ: Երեւակայեցէք բերկրաւոր զարմանքս, երբ, ժպիտ մը իր դառնացած, տըխուր զէմքի վրայ, ոտքի ելաւ ու եկաւ զին զիմաւորելու: Յուզուած յառաջ նետուեցայ ու ոտքն ինկայ: Համբուրեցի զանոնք, հագուստին ծոպերը, ձեռքերը, մինչեւ որ բարձրացնելով կուրծքին սեղմեց զին Ո՛հ, այդ պահուն խոնկած հոգեւոյս բաբախումը... «Հայրս կը սիրէ՞ զին, ո՛հ, հայրս կը սիրէ՞ զին...» Այս պիտի ըլլար յանկերգը, եթէ այդ զգացումները բառերու վերածուէին:

Իր առաջուան տեղը տանելով մօ-

յոքի շատին զոր րրաւ տեղուոյս ընկերներէն մին: այժմ կիմանանք որ, գաւառներու մէջ ալ այդ տեսակ երեւոյթներ տեղի կունենան. կը գտնուին տեղեր իսկ այնք զրկուած ընկալագրեր: Եւ կը գործունենն, Վ. կոմիտէին խրատական հրահանգներ տալով, որ եւ կենան այդ տեսակ վերստակար թէ նիւթապէս և թէ բարոյապէս, քայլէ մը: Մենք կը զարմանանք ասոնց վրայ, թէ կը յայտարարեն որ վարդօն բան մը չէ ճշգրտ, անոր քսածներն կարեւորութիւն չունին. ոչ ոք ուշադրութեան կառնէ և թէ կիլլան մասնաւորապէս վարդօնի դէմ կուելու համար «Ռազմիկ» խոշոր անունով թերթ հրատարակելու:

«Իր զրկեմ ձեզի գաւառէ մը կ. կոմիտէին թերթի մասին եկած նամակի մը պատճէնը, ինչորեւից որ զայն առ այժմ չը հրատարակէք, ալ պահէք պէտք եղած ժամանակին մէջ տեղ դնելու: Այդ նամակէն կրնաք հասկընալ թէ գաւառներու մէջ գրաւուած Դաշակցական ընկերներն ալ զուրկ չեն գիտակցութենէ և ներկայ կոմիտէն այնքան դիւրութեամբ չը պիտի կրնայ ընկերները գործիք դարձնել իր ստորին նպատակներուն հասնելու համար»:

Այս տողերը գրելուց յետոյ մեր Յիլիպէի բարեկամը, աւելցնում է, «Հանգիստ եղէք, ասոնք իրենց թերթով ալ չը պիտի կրնան ձեզի վրայ հասցնել: Թէ նիւթապէս և թէ բարոյապէս որովհետեւ ստորին նպատակներով է որ ճամբայ կիլլան, իսկ հիմայ ամենէն պարզ մարզն իսկ

տը աթոռի մը վրայ նստեցուց զիս: Կարդացնել տուաւ: Մտեցաւ կարգացած գրքերու և աշխարհի մէջ կատարուած այնպիսի բաներու մասին, որոնց բողոքովն անտեղեակ էի: Այսուհետեւ հայրս էր ուսուցիչս: Միքէն պէտք էր հրաժարէր:

Բուպիկօնը անցած էինք: Հայրս կը սրիէ՞ր զիս...:

Ի. Բ.

ՎԱՅՈՒՊԱՆ ԻՆՍԱՆ ՄԸ

Հայրս—ո՛վ կրնայ նկարագրել զայն: Ան միևնոյն ժամանակ մարգարէ մը, վարժապետ մը և իշխան մը: Իր Դէֆիին Առհասարակ տեղային տարագը կը հագնէր, քայց ատի բողոքովին բուրձէ շինուած էր ու մէջքը կը գոտեւորեր կանեփի պատտոնի կտորով մը: Այլա՛նդ՝ կ պերճանք այսպիսի արքայական կերպարանքի մը որ ու է ձպտում չը կըրնար ծածկել—տարօրինակ զգեստ մէկու մը, որ պէտք էր քահանայական սպասներու և գեղեցիկ ճեմակեղի: Նայ մէջ Բարձրալի խորանին առջեւ սպասաւորէր—սակայն, յարմար, ո՛հ, որքան պատշաճ՝ գատաստանական մարգարէի մը, եղբերգակ գուշակողի

այնչափ միամիտ չէ որ զօրավիզ հանդիսանայ յեզափոխութեան մէջ շնչին նշանակութիւնն իսկ չունեցող մարդոց»:

Մենք մեր բարեկամի այս տողերին պատասխանում ենք. մոնք ո՛չ «Ռազմիկ» և ո՛չ «Պատերազմիկ» թերթերի ծնունդից ենք վախենում: Մեր պայքարը սկսած միջոցին «Դաշակցութիւնը» առանց թերթի չէր: Մի կողմ թողնենք կուսակցութեան օրգանը «Դրօշակ»ը, Ամերիկայում գոյութիւն ունի «Հայրենիք»ը և Եգիպտոսում «Հորիզոն»ը:

Թո՛ղ հիմեն... Ի՛նչ ծախսեն կամ միամիտների կամ կուսակցութեան գրամը... Թո՛ղ ստեղծեն, այն, ինչ որ կարող է մեզ լաւ շարժառիթներ ստեղծել...:

Վ

ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆԾ ԻՄ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՍ


—()—

Բարեսիրական ընկերութեանց յառաջդիմութեան ցանկացող ըլլալուս համար, ու հետաքրքիր անոնց ամէն մէկ գործելակերպին ու կազմութեան, իմանալով թէ վառնա ունի այդպիսի Բարեգործ. ընկերութիւններ, և առիթ սեպելով իմ հոս տեղ գտնուիլս ուղեցի մանրամասն և տեղնու տեղով գաղափար մը ստանալու համար մըտադրեցի անցեալ օր կիրակի օգոստ, 7ին առաւօտուն Ս. Սարգիս եկեղեցին գտնուիլ, ուր կը գտնուի մասնաւորապէս սոյն ըն-

մը, որ, զարմանալի վեհանձնութեամբ մը, բանապետներու գարշապարներուն ներքեւ ճզմուող և Աստուած մտնողած իր հայրենի երկրին համար զգացած վիշտերուն տակ ծանրաբեռնուած կը մոռնար անձնական անզուգական տառապանքները և այն եօթնապատիկ տաքցուած գեհնանը, որուն մէջէն անցած էր:

Երբ, իւրաքանչիւր առաւօտ կը ձերբարկէ առջեւ իր օրհնութիւնը խնդրելու, Սէրը այդ քուրճը, որ իր ազնիւ իրանը կը բողբէր ճարտարութեն գոհարներով ասեղնագործուած գարգի մը կը վերածէր, Համբերեցէ՛ք ինձ հետ, Թո՛ղէ՛ք վարանիլ... Օրերը արագօրէն կը սահին, ու պիտի գայ ժամանակ մը որ այդ գթալիք ու կարեկէր սեւ աչքերը պիտի ըլլան... Ի՛նչ, Աստուած իմ, հեռացուր այդ տեսիլքը... Ապագային ծանրութիւնը կը ճնշէ հոգիս, մահուան ստուերը կը նսեմացնէ՛. երկասարդութիւնս ճառագայթները:

(Շարունակելի)



կերթնանց ժողովատեղին. ու ըստ որոշած մտադրութեանս գացի եկեղեցի. մի քիչ ժամանակ եկեղեցական արարողութեանց ունկնդրելէ յետոյ ելայ դուրս եկեղեցւոյ շրջափակը, երբ յանկարծ Աղք. ընկ. անգամ ծանօթ բարեկամներէս մին մօտենալով ինձ հրախրեց ժողովատեղի սենեակը. Հետը մէկտեղ գացի սոյն սենեակը ուր որպիսիական քանի մը հարցումներ ուղղելէ յետոյ իրարու, ես խօսք առնելով խնդրեցի որ եթէ կարելի է տեղեկութիւն մը տայ ինձ Աղք. ընկ. գործակերպին մասին, նա սիրով ընդունեց իմ առաջարկս, և նախ առանց հարցում մը ուղղելու իմ գիտումիս դէմ, իր ընկերութեան անդամոց տետրակը հրամցուց ինձ: Իայց երբ բացի սեսայ սոյն տետրակը և մէջի անգամակցող անհատներուն փոքրաթիւ անունները որոնք գրեթէ միջակ դասակարգի անձերէ կը բաղկանային. զարմանալով բարեկամիս հարցուցի թէ ա՞յս է ընկերութեան բոլոր ուժը. նա ալ պատասխանեց թէ այո՛, սակայն և այնպէս յարեց թէ կաշխատինք աւելի ուժ տալու և շատ մը առարկութիւններ ըրաւ ընկերութեան այս ընթացքին մէջ գտնուելու մասին, ու նաև ըսաւ թէ մեր Վառնայի աղքատները շատ ու շատ են ժողովրդին շատութեան պատճառաւ, բայց դժբաղդաբար նըպաստ տուողները մեծաւ մասամբ միջակ դասակարգէն ըլլալով շատ ու շատ քիչ է ու ցաւ յայտնեց նոյն իսկ որ եթէ այդպէս շարունակուի ընկերութեան ընթացքը տապալումը օրըստօրէ կը մօտենայ:

Աստի պարտք համարելով պիտի խնդրեմ հրապարակաւ Վառնայի մասնաւորապէս հայ հարուստներէն և վերջապէս ամէն մէկ գործի տէր եղող հայ անհատներէն որ իբր տարրական պարտականութիւն սեպելով իսէր այս Աղք. Բարեգործական ընկ. յառաջդիմութեան և նաև ի սէր հայ ազգի կարօտեալներուն գոնէ շարժական նպաստ մը տալէ չի զլանան սոյն ընկերութեան:

Քալով Որբախնամ ընկ. մասին որը ինչպէս այդ օրը իմացայ հիմնուած է եղեր քանի մը բարեսէր անձնաւորութիւններէ, ի սէր Հայաստանի քանի մը ուսանող որբերու յառաջդիմութեան, և բաւական ալ անգամակցող նըպաստողներ կան եղեր իայց և այնպէս ինչպէս ըսաւ բարեկամս թէ այդ յանձնախմբի անդամները մամանակէ մը ի վեր շատ դանդաղ վիճակի մէջ կը գտնուին այնպէս որ ոչ տարեկան հաշիւ կուտան և ոչ ալ այդ մասին ձայն

կը հանեն եղեր. ոյով ժողովուրդը այսինքն անգամակցող մարմինները օրստօրէ ալ զգուցելով երես կը դարձնեն կտրելով նաև իրենց սոյն ընկերութեան վճարած նպաստը: Ուրեմն ես պարտականութիւն և նամանաւանդ իրաւունք ունենալով իբր հայ անհատ պիտի խնդրեմ յարգելի Որբախնամ ընկերութեան մասնախմբէն որ օր առաջ թօթուեն իրենց թուլութիւնը և նոր ոգով նորէն ձեռք տան գործին գոնէ պատճառ չըլլալու չափ կէս ճամբան չձգելու համար այդ ընկերութեանն օգուտ ուրբերու յառաջդիմութիւնը: Կսպասեմք անյայտալ:

ԲԱՆԻ ՄԷ ԽՕՄԻ ԴԵՐՍ. Պ. ՊԵՆԵՆՆԻՆ

Անցեալ չորեքշաբթի «Իրաւունք» և «Ճարձու» թերթերու մէջ կարդացի Ձեր նպատակին դէմ իմ ըրած անաչառ քննադատութեանս պատասխանը:

Պարո՛ն, սա գիտցեք թէ այդ ձեր նպատակին ներկայացուցած Օրէկոս տրամբ, որ առանց ամաչելու ուրիշ հեղինակութիւն մը ցոյց տուած է իք թատերասէր հասարակութեան, որը դժբաղդաբար բնաւ չէր դուրս բերէր գոնէ մի քիչ տարբերութիւն նէքստիբան Օթէկոսէն ալ միայն դուք ձեր մեծ խելքով կըրճատելով տրամբ նաև ուրիշ ձեւեր ու անուններ տալով ուզած էիք ուրիշ հեղինակութիւն կուշի ձեր այդ գիշերուան անտանելի Օթէկոս:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ
Ի ՆՊՍՍՍ ՍԱՍՈՒՆԻ ԱՐԿԱՏԵԼՈՑ

Սասունի արկածելոց օգնութիւն հասցնելու նպատակաւ քաղաքիս մէջ հանգանակութիւն մը կատարուած էր քանի մը ամիս ասկէ առաջ Տ. Տ. Ղազարոս Ավճեանի, Եփրէմ Համբարեանի և Նշան Սարգիսեանի ձեռամբ: Հաւաքուած գումարը, 1000 ֆր. մամանակին չէքով մը զրկուած էր Կ. Պոլսոյ անգլիական դեսպանին: Բայց դժբաղդաբար նամակատանց պաշտօնէից անուշադրութեան հետեւանքով, ապահովագրեալ նամակը չէքին հետ միասին կորսուել էր: Քանի մը շաբաթ դեպքանտունէն պատասխան չ'ստացուելուն պատճառաւ ուրիշ նամակաւ մը հարցուեցաւ դեսպանին, որ անմիջապէս պատասխանեց թէ նամակը և չէքը չէ ստացած: Երկար փնտառութեան վերջ հանգանակող երիտասարդները ստիպուեցան չէքը առողդրամատան դիմել և չէքին երկրորդը ստանալ:

Ահա այս երկրորդ անգամ առնուած չէքը ասկէ շորս շաբաթ առաջ ապահովագրեալ նամակով զրկուեցաւ նոյն դեսպանին, որ այս անգամ ստանալով այդ 1000 ֆրանքնոց չէքը, հոս Տ. Եփրէմ Համբարեանի իմացուց թէ այդ գումարը ստացած է և Պիթիսի անգլիական հիւպատոսին զրկած է Սասնոյ կարօտեալներուն բաժնելու համար:

Տէր Խմբագիր, կը խնդրեմ հաճեցեք սոյն երկտող գրութիւնս հրատարակել Նարժու միջառաջիկայ թիւին մէջ ի հանգստութիւն նուիրատուաց:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամբողջ Պուլկարիոյ մէջ տեղի ունեցան նահանգային վարչութիւններու ընտրութիւնները. շահեցաւ կառավարութիւնը: Տեղի պիտի ունենայ նաև քաղաքային վարչութեանց ընտրութիւնը. ընդդիմադիր կուսակցութիւնները որոշած են միացած գործել:

— «Էնտ. Բուժէն» թերթին մէջ Պուլկարիայէն գրուած յօդուած մը կայ, ուսկէ կիմանանք թէ թուրք կառավարութիւնը կը պահանջէ հայ մը որ մասնակից եղած է Պոլսոյ մահափորձին: Արդարագոտութեան նախարարը զբաղուած է այդ խնդրով:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պոլսէն կը հաղորդեն որ Ձմիւռնիոյ գաւազրութեան պատճառով շատ մը հայեր կը ձերբակալուին: Օգոստոս 10ին Պոլսէն վ. Բօշթա թերթին կը հաղորդեն որ Սուլթանը ելլալով շուրջը երրորդ պարիսպ մը շինել կուտայ, որը հսկայական պիտի ըլլայ: Հազարաւոր գործաւորներ արդէն սկսած են այդ գործին պարիսպը 6-7 քիլոմէթր շրջապատ պիտի ունենայ որ պիտի սկսի Պեշիկթաշէն անցնելով Օրթա գիւղի և Մաչլակի բարձրութիւնները:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Կեղծ սահմանադրութեան հընչակումը առանձին գոհացում մը պատճառած չէ, որովհետեւ ցարի ստեղծած Տուման օրէնդրական իրաւունքներ չունի, Մոսկվայի Ձեմսթվոյին նախագահը, ինչպէս և քաղաքապետը յայտարարած են որ հոչակում սահմանադրութիւնը գոհացուցիչ չէ:

Ձեմսթվոյի նոր համագումարում մը պիտի տեղի ունենայ, որպէսզի որոշեն թէ ի՞նչ գիրք պիտի բռնեն:

— Թերթերէն մէկ քանին կը պահանջեն որ անմիջապէս խօսքի և մամուլի ազատութիւն տրուուի, որպէսզի կարելի ըլլայ գաւազր ընտրութիւններու մասին գրել, խօսիլ և կանոնաւոր պատրաստութիւն տեսնալ:

— Անցեալ օր Բեթերսպուրկի մէջ հոչակումը ազատամիտ բրօքէսթ Միլիքիին տունը քանի մը բրօքէսթներ և կարեւոր մարդիկ կը հաւաքուին խորհրդածելու համար թէ ինչպէս ընեն որ նոր ստեղծուած Տուման օգտակար դարձնեն:

Աստիկանութիւնը առանց այլ և այլութեան ձերբակալութիւնը չի ուզեր որ յայտնի և ազդեցիկ ազատամիտները ընտրուին:

— Նոր խառնութիւններ կսպասուին, մանաւանդ ինթելիգենտ Բրօքէթարներու բանւորական շարժումներու ղեկավարներուն կողմէն, որովհետեւ ասոնք բոլորովին զրկուած են նոր Տումային մասնակցելու հնարաւորութեան:

Յրանսական մամուլը եւ ուս սահմանադրութիւնը

Յրանսական մամուլը գրաւուած ըլլալով հաշտութեան բանակցութիւններով, ուս սահմանադրութեան հաշակումը գրեթէ անկատելի անցաւ:

Ընկերվարական թերթերը շատ դժգոհ են, որովհետեւ քաղաքական յանցաւորներու նե. բում շրկայ, և իրական յեղափոխութեան սկիզբը կը տեսնան այս երեւոյթի մէջ:

«Աքսիօն» թերթը կը յայտարարէ— Նիքօլ ինչ որ ալ ընէ վրէժխ դիր յիղափոխութիւնը չը պիտի ուշանայ:

«Լաբիթ» Թէրիւրիք» կը կայտարարէ,— Կյոք ամբողջ սահմանադրութեան մէջ կը տեսնանք որ Նիքօլան մէկ ձեռքով տուածը միւսովը կառնէ:

Առաջին ժողովին գործը պիտի ըլլայ քանդել այդ սահմանադրութիւնը որուն պարտական է իր գոյութիւնը:

Հաշտութիւնը

Ռուս լիազօրները կը յայտարարեն որ ոչ պատեհազմական տուգանք կուտան, ոչ Սախալինը և ոչ ալ չեզոք նաւահանգիստները ապաստանած զրահաւորները կը յանձնեն:

Բանակցութիւնները խղուած են այլեւս, սակայն դեռ յոյս ունին որ յաջող վերջ ունենայ: Ծառնական թերթերը կը հաղորդեն որ իրենց պահանջները շատ համեստ են և եթէ հաշտութիւնը չը կայանայ պատասխանատուն Ռուսիան է: